Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

•Փորձարարական և տեսական հոդվածներ •Экспериментальные и теоретические статьи•
•Experimental and theoretical articles•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3 (73), 2021

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԵՂԱԶԱՐԴ ԹՓԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒ ԹԵՓՈՒԿԱԹԵՎԵՐԻ (INSECTA, LEPIDOPTERA) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մ.Ա.ՄԱՐՋԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ԳԿ-ի կենդանաբանության ինստիտուտ
harruz@yandex.ru, mmarjanyan@yahoo.com

Ուսումնասիրվել է Երևան քաղաքի գեղազարդ թփերի 4 ցեղերի ներկայացուցիչների (*Berberis* L., *Lonicera* L., *Syringa* L., *Spiraea* L.) վնասատու թեփուկաթևերի (Lepidoptera) ֆաունան: Հայտնաբերվել են 27 տեսակի միջատներ, որոնք զգալի վնաս են հասցնում վերոհիշյալ բույսերին: Բերված են համառոտ տեղեկություններ այդ վնասատուների կենսաէկոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ:

Երևան – գեղազարդ թփեր – վնասատուներ – թեփուկաթևեր

Изучена фауна чешуекрылых вредителей представителей 4-х родов (*Berberis* L., *Lonicera* L., *Syringa* L., *Spiraea* L.) декоративных кустарников города Еревана. Обнаружено 27 видов насекомых, которые значительно повреждают вышеупомянутые растения. Приведены краткие сведения о биоэкологических особенностях этих вредителей.

Ереван – декоративные кустарники – вредители – чешуекрылые

The fauna of pest lepidoptera of 4 genus (*Berberis* L., *Lonicera* L., *Syringa* L., *Spiraea* L.) of ornamental shrubs of Yerevan is studied. 27 species of insects which harm these plants were found. The short information about bioecological features of these vermins is presented.

Yerevan – ornamental shrubs – vermins – Lepidoprera

Բնակավայրերի կանաչապատման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բարձր գեղազարդությամբ, կլիմայակարգավորիչ, փոշեհավաք, աղմկապաշտպան, բարձր հարմարվողականությամբ, ֆիտոնցիդ և այլ հատկություններով օժտված ծառաթփատեսակներին: Գեղազարդ թփերի արագ աճն ու երկարակեցությունը, ինչպես նաև հատուկ խնամքի պահանջի բացակայությունը պայմանավորում են դրանց կիրառումը կանաչ շինարարությունում:

Երևան քաղաքի կանաչապատման ոլորտում թե՛ անցյալում, թե՛ ներկայում եղել և մնում են բազմաթիվ խնդիրներ և բացթողումներ: Համաձայն վերջին ուսումնասիրությունների՝ ներկայումս մայրաքաղաքում աճում են ավելի քան 170 տեսակի ծառեր և թփեր: Հարկ է նշել, որ քաղաքի կանաչ զանգվածում գերակշռում են անցյալ դարի 60-ական թվականներին տնկված ծառաթփատեսակներ, որոնք ծերացած են և վաղուց կորցրել են սաղարթի ամբողջականությունն ու գեղազարդությունը [1, 5]:

Այս բույսերի պահպանման և վերարտադրության համար անհրաժեշտ է ճիշտ և ժամանակին կատարել ագրոտեխնիկական միջոցառումներ, պայքարել դրանց վնասա-տուների և հիվանդությունների դեմ:

Երևանի և հանրապետության մի շարք քաղաքների գեղազարդ տնկարկների վնասատուների և հիվանդությունների ուսումնասիրմանը նվիրված բազմաթիվ հետազոտություններ են կատարվել 1960-90-ական թվականներին [2, 3, 8], որոնց արդյունքում արձանագրվել են ավելի քան 800 տեսակի վնասատուներ (նեմատոդներ, տզեր, միջատներ): Սակայն վերջին տարիներին նմանատիպ ուսումնասիրությունները խիստ սակավաթիվ են [4, 7]: Անցած ժամանակահատվածում զգալիորեն փոխվել է քաղաքների ու գեղազարդ տնկարկների պատկերը (տեսակաշարը, տարիքը), ու դրան զուգահեռ ձևավորվել է յուրահատուկ էնտոմոֆաունա:

Տվյալ աշխատանքի նպատակն է բացահայտել Երևանի գեղազարդ թփերի առավել տարածված 4 ցեղերի ներկայացուցիչների վնասակար թեփուկաթևերի (թիթեռների) ֆաունան, ուսումնասիրել կենսաէկոլոգիական առանձնահատկություն-ները:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են 2015-20 թթ. Երևանի բուսաբանական այգում, քաղաքի պուրակներում և զբոսայգիներում: Աշխատանքում օգտագործվել են միջատաբանական հետազոտություններում ընդունված մեթոդներ [9], այդ թվում՝ հավաքներ միջատաբանական ցանցով, էքսգաուստերով: Նախահասուն փուլերի §դաստիարակում՝ իրականացվել է լաբորատոր պայմաններում:

Թիթեռների տեսակային պատկանելության որոշումը կատարվել է մի շարք որոշիչների [6, 10] և ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ԳԿ-ի կենդանաբանության ինստիտուտի միջատաբանական հավաքածուի նյութերով:

Արդյունքներ և քննարկում: Ստորև ներկայացված են համառոտ տվյալներ Երևանի պուրակներում և զբոսայգիներում տարածված գեղազարդ թփատեսակների 4 ցեղերի ներկայացուցիչների վերաբերյալ [1]:

Կծոխուր սովորականը (*Berberis vulgaris* L., ընտանիք Berberidaceae) մինչև 1,5 մ բարձրությամբ տերևաթափ թուփ է: Երաշտադիմացկուն, ցրտադիմացկուն, ստվերատար, հողի նկատմամբ պահանջկոտ չէ: Գեղազարդ է տերևներով (դեղնականաչ՝ վաղ գարնանը, նարնջակարմիր՝ աշնանը), դեղին ծաղիկներով և վառ կարմիր պտուղներով:

Ցախակեռասների (*Lonicera* L., ընտանիք Loniceraceae) ավելի քան 200 տեսակներից Հայաստանում աճում են 4 տեղական և 29 ներմուծված տեսակներ: Լուսասեր են, հողի նկատմամբ բավականին պահանջկոտ, դիմացկուն են գազի և ծխի նկատմամբ: Գեղազարդ են գունավոր հատապտուղներով և հոտավետ ծաղիկներով:

Հայտնի է եղրևանու (*Syringa* L., ընտանիք Oleaceae) մոտ 30 տեսակ, որոնցից Հայաստանում տարածված են 2-ը՝ սովորական (*S. vulgaris* L.) և պարսկական (*S. persica* L.): Սովորական եղրևանու ավելի քան 350 սորտերն աչքի են ընկնում ծաղիկների ամենատարբեր գունավորմամբ, լիաթերթիկությամբ, ծաղկման ժամկետներով և տևողությամբ:

Ասպիրակների (*Spiraea* L., ընտանիք Rosaceae) ցեղն ընդգրկում է շուրջ 100 տեսակների տերևաթափ թփեր, որոնցից Երևանի բուսաբանական այգու հավաքածուում ներկայացված են 22-ը. ցրտադիմացկուն են, չորադիմացկուն, պահանջկոտ չեն հողի նկատմամբ:

Աղ.1-ում ներկայացված են վերոհիշյալ թփատեսակների հիմնական վնասատուները:

Արձանագրված 27 տեսակի թեփուկաթևերը, ըստ ընտանիքների, ներկայացված են հետևյալ կերպ՝ Nepticulidae–1, Gracillariidae–2, Alucitidae–1, Ypsolophidae–1, Cossidae–1, Carposinidae–1, Tortricidae–10, Geometridae–2, Lasiocampidae–3, Sphingidae–1, Saturniidae–1, Erebidae–1, Noctuidae–2: Քանակական առումով առավել շատ տեսակներով (10) ներկայացված է տերևոլորների Tortricidae ընտանիքը: Ըստ կերային մասնագիտացման՝ պոլիֆագ են 20, ստենոֆագ՝ 7 տեսակներ:

Աղյուսակ 1

Թփատեսակների վնասատու թեփուկաթևերի ֆաունան

Բույսի անվանումը	*Վնասատու թեփուկաթևի անվանումը*	*Միջատի վնասող փուլը և բնույթը*
1	**2**	**3**
Berberis vulgaris L.	*Lobesia botrana* Den.et Shiff.	Թրթուրները ներթափանցում են կոկոնների մեջ, սնվում, ապա մետաքսաթելերով միացնելով մի քանի կոկոններ՝ ձևավորում են բներ
	Archips rosana L.	Երիտասարդ թրթուրները ներթափանցում են բողբոջների և կոկոնների մեջ, կմախքացնում կամ ծակոտում են տերևները, պտղակաթերթիկները: Մեծ հասակի թրթուրներն ապրում են խողովակաձև ոլորված տերևների ներսում, վնասում են նաև պտուղները
	Carposina berberidella H.-S.	Թրթուրները սնվում են հասունացող պտուղներով
	Malacosoma parallela Stgr.	Թրթուրները ճյուղերի անկյուններում մետաքսաթելերով բներ են կառուցում և սնվում բողբոջներով ու տերևներով: Զանգվածային բազմացման դեպքում լրիվ տերևազրկում են բույսը
Lonicera L.	*Ypsolopha lonicerella* Stökl.	Երիտասարդ թրթուրները ականում են տերևները, ապա ապրում են մետաքսաթելերով իրար միացված 2 տերևների միջև
	Phillonorycter emberizaepinella Bche.	Թրթուրներն ականում են տերևների ստորին մակերեսը
	Eupoecilia ambiguella Hb.	Թրթուրները վնասում են կոկոնները, ծաղիկները և պտուղները՝ մետաքսաթելերով փաթաթելով ձևավորում են բներ
	Archips rosana L.	Տե՛ս *B.vulgaris* -ի վնասատուների պահանջում
	A.xylostenia L.	Թրթուրները կմախքացնում են երիտասարդ տերևները, կոկոններն ու ծաղիկները, ապա տերևները խողովակաձև ոլորում են գլխավոր ջղի լայնությամբ, որի մեջ ապրում և հարսնյակավորվում են
	Pterotopteryx dodecadactyla Hb.	Թրթուրները ձևավորում են ցողունային գլխարներ
	Carposina berberidella H.-S.	Տե՛ս *B.vulgaris* -ի վնասատուների պահանջում
	Neoris huttoni Moore.	Թրթուրները սնվում են տերևներով՝ թողնելով միայն կոթունները
	Lymantria dispar L.	Թրթուրները սնվում են բողբոջներով, տերևներով և կոկոններով: Զանգվածային բազմացման դեպքում լրիվին ոչնչացնում են սաղարթը

Աղյուսակ 1 (շարունակություն)

1	2	3
Syringa vulgaris L.	*Gracillaria syringella* F.	Թրթուրները ակտիվանում և խաղողավանդակ դրսում են տերևները
	Zeuzera pyrina L.	Թրթուրները անցքեր են բացում ընձյուղների, ճյուղերի, ինչպես նաև երիտասարդ բույսերի ցողունների մեջ
	Archips rosana L.	Տե՛ս *B.vulgaris* -ի վնասատուների սյունակում
	Adoxophyes orona Fish.v. Rosl.	Թրթուրները վնասում են բողբոջները, սպրս տերևները՝ դրանք խաղողավանդակ դրսերով և մեռաքաղաթելով իրար միացնելով
	Choristoneura diversana Hb.	Կենսակերպը նման է *Adoxophyes orona*-ին, թրթուրները սպրում և սնվում են գազպթեցին ընձյուղների վրա գտնվող խաղողավանդակ դրսված տերևներում
	Pandemis heparana Den.et Shiff.	Թրթուրները վնասում են բողբոջները, կոկոնները, ծաղկաբույլերը՝ մեռաքաղաթելով իրար միացնելով
	Malacosoma neustria L.	Կենսակերպը նման է *Malacosoma parallela*-ին
	Sphinx ligustri L.	Թրթուրները կմախքացնում են տերևները
	Amphipyra berbera Rungs.	Թրթուրները վնասում են բողբոջները, տերևները սպրս նաև պտուղները
	A.pyramidea L.	Կենսակերպը նման է *Amphipyra berbera*-ին
Spirea L.	*Stigmella aurella* F.	Թրթուրները ակտիվանում են տերևների ստորին մակերեսը
	Archips rosana L.	Տես *B.vulgaris* -ի վնասատուների սյունակում
	Acleris aspersana Hb.	Թրթուրները սպրում են խճճված տերևների սրունքում
	Celypha siderana Treitschke	Կենսակերպը նման է *Acleris aspersana*-ին
	Clepsis spectrana Tr.	Թրթուրները սնվում են բողբոջներով, կոկոններով, ծաղիկներով
	Biston betularia L.	Թրթուրները կմախքացնում են տերևները
	Eupithecia satyrata Hb.	Թրթուրները վնասում են ծաղիկները
	Lasiocampa quercus L.	Կենսակերպը նման է *M.parallela*-ին

Ըստ բույսերի օրգաններին հասցրած վնասի՝ նշված տեսակները բաշխված են հետևյալ կերպ. բողբոջների և տերևների՝ 20, ընձյուղների, ճյուղերի և ցողունի՝ 2, կոկոնների, ծաղիկների և պտուղների վնասատուներ՝ 11: Տեսակների քանակով գերակշռում են տերևակերները (ֆիլլոֆագները), որոնց ներկայացուցիչները զանգվածային բազմացման տարիներին զգալի վնաս են հասցնում թփատեսակներին: Այս խմբում առավել վտանգավոր են *Zeuzera pyrina* L., *Archips rosana* L., *Biston betularia* L., *Malacosoma parallela* Stgr., *M. neustria* L., *Lasiocampa quercus* L. տեսակները: Վնասատու թեփուկաթևերի ամենաշատ տեսակներ արձանագրվել են *Syringa vulgaris*-ի վրա (10):

Ներկայացված տվյալները կարող են ուղեցույց հանդիսանալ քաղաքի կանաչապատման և բույսերի պաշտպանության աշխատանքների կազմակերպման գործընթա-ցում:

Երևանի և հանրապետության մի շարք քաղաքների գեղազարդ տնկարկների վնասատուների վերաբերյալ հոդվածում ներկայացված տվյալները նախնական բնույթ են կրում, աշխատանքներն այդ ուղղությամբ շարունակվում են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Վարդանյան Ժ.Հ., Գատրչյան Գ.Մ., Գրիգորյան Մ.Մ., Փայտյան Յու.Ե.* Գեղազարդ ծառեր ու թփեր կանաչապատման համար, Երևան, Էդիթ Պրինտ, 361 էջ, 2015:
2. *Арутюнян Г.А.* Вредная энтомофауна ботанических садов Армении, Бюлл. Бот. Сада АН АрмССР, 25, с. 99 -107, 1979.
3. *Арутюнян Г.А.* Влияние вредной энтомофауны на декоративность зеленых насаждений г.Еревана, Бюлл. Бот. сада АН АрмССР, 26, с. 141-151, 1985.
4. *Арутюнян Р.Г., Алексанян А.С., Арутюнян Г.А.* Вредная энтомофауна кизильника (Cotoneaster Medic.), Материалы XVI международной конференции “Биологическое разнообразие Кавказа и Юга России”, Назрань, с. 20-22, 2014.
5. *Варданян Ж.А., Ктракян С.А.* Эколого-биологические аспекты оптимального сочетания аборигенных и интродуцированных древесных растений применяемых в озеленении г.Еревана, Доклады НАН РА, 4, 119, с. 345-351, 2019.
6. Гусев В.И.Определитель повреждений деревьев и кустарников, применяемых в зеленом строительстве, Москва, Агропромиздат, 239 с., 1990.
7. *Калашян М.Ю., Марджанян М.А., Оганесян В.С., Арутюнова Л.Дж., Хачатрян А.Г., Арутюнян Р.Г., Мирумян Л.С., Карагян Г.А., Магомедова М.З., Креджян Т.Л., Аветисян А.А., Акопян Н.Х.* Предварительные данные по фауне беспозвоночныхживотных городского ландшафта(Mollusca, Insecta),Материалы XXI международной конференции “Биологическое разнообразие Кавказа и Юга России”, Магас, с. 333-335, 2019.
8. *Мирзоян С.А.* Дендрофильные насекомые лесов и парков Армении, Ереван, “Айастан”, 453 с., 1977.
9. *Палий В.Ф.* Методика изучения фауны и фенологии насекомых. Воронеж, 191с., 1970.
10. *Синев С.Ю.* Каталог чешуекрылых (Lepidoptera) России, СПб.-М., КМК, 424с., 2008.

Ստացվել է 25.05.2021